

**Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն**  
**Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր,**  
**Տրանշեր 1 և 2**

---

Ծրագրի համարը՝ 42145  
Հուլիս-դեկտեմբեր 2022թ.

**Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային Միջանցքի**  
**Ներդրումային Ծրագիր**  
**Տրանշեր 1 և 2**  
**(Ֆինանսավորվում է ԱԶԲ-ի կողմից)**

Կազմվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից  
Երևան, ՀՀ

## Հապավումների ցանկ

|       |   |
|-------|---|
| ԱԶԲ   | Ասիական Զարգացման Բանկ                                    |
| ԿՇՄԿՊ | Կապալառուի Շրջակա միջավայրի կառավարման պլան               |
| ՇՄԿՊ  | Շրջակա միջավայրի կառավարման պլան                          |
| ՇՄԱԳ  | Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում                    |
| ՆԲՓ   | Նախնական բնապահպանական փորձաքննություն                    |
| ԲՄՄ   | Բնապահպանության գծով միջազգային մասնագետ                  |
| ԲԱՄ   | Բնապահպանության գծով ազգային մասնագետ                     |
| ԲՆ    | Բնապահպանության նախարարություն                            |
| ՏԿԵՆ  | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| ԿԳՄՄՆ | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն   |
| ՏՇՄԿՊ | Տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի կառավարման պլան          |
| ԵԿՊ   | Երթևեկության կառավարման պլան                              |
| ՃԴ    | «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ                           |
| ԲՄՀ   | Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն                  |

## **1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

### **1.1 Նախապատմություն**

Սույն Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվությունը ընդգրկում է 2022թ-ի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածը (թիվ 20):

Հաշվետվությունը պատրաստվել է միայն Ճանապարհային դեպարտամենտի կողմից, քանի որ ֆրանսիական «Մաֆեժ» և իսպանական «Էպտիսա» ընկերությունների համատեղ ձեռնարկությունից կազմված ԾԿԽ-ի/Ինժեների հետ կնքված պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

### **1.2 Հիմնական տեղեկատվություն**

Ի սկզբանե, շինարարական աշխատանքները իրականացվել են Կորսան Կորվիամ Քոնստրուկսին Էս.Էյ. հայկական մասնաճյուղի և վերջինիս ենթակապալառուների կողմից: Այնուամենայնիվ, ՊԸՊ-ի 15.2 (ե) ենթակետի համաձայն, Պատվիրատուն 2019թ. հուլիսի 18-ին դադարեցրել է Կապալառուի հետ շինարարական աշխատանքների պայմանագիրը: Պայմանագրի ավարտից հետո ԾԿԽ/Ինժեները սկսել է իրականացնել շինարարական աշխատանքների պայմանագրի դադարեցման հետ կապված հետագա գործընթացները: Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկվել են միջոցներ այլ կապալառուների միջոցով ծրագիրը շարունակելու ուղղությամբ: Այդ նպատակով, նախատեսվում է ներգրավել Ծրագրի նոր Ինժեներ/Խորհրդատու: Անհրաժեշտ մրցութային փաստաթղթերը մշակվել և հաստատվել է ԱԶԲ կողմից: «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերությանը ուղարկվել է Տրանշ 2-ի ներքո նախագծային աշխատանքներ իրականացնող նոր Նախագծող/Ինժեների ծառայությունների իրականացման վերաբերյալ հրավեր: «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության կողմից ներկայացված ֆինանսական առաջարկի և նվազեցումների վերաբերյալ բանակցությունները հաջողությամբ ավարտվել են: Բանակցությունների արդյունքները հաստատվել է Ծրագրի Կառավարման խորհրդի և ԱԶԲ կողմից: Ներկայում ընթանում են «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության հետ Պայմանագրի ստորագրման վերաբերյալ բանակցությունները, որից հետո համապատասխան պայմանագիր կկնքվի, և կվերսկսվի Ծրագրի իրականացումը և նոր կապալառուների մրցութային փաստաթղթերի պատրաստումը:

Սյուս կողմից Ճանապարհային դեպարտամենտը բանակցել և 2020թ. օգոստոսի 10-ին կնքել է պայմանագիր պրն. Վիկտոր Բախտամյանի հետ որպես ՆԲՓ/ՇՄԱԳ Խորհրդատու՝ Ծրագրի նոր նախագծի և ընթացիկ աշխատանքների համաձայն, Տրանշ 2-ի 8 կմ հատվածի (կմ29+600 – կմ37+600) համար Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման փաստաթղթի ուսումնասիրման և թարմացման ծառայությունները տրամադրելու նպատակով: ՆԲՓ/ՇՄԱԳ-ը թարմացնելու սույն պահանջը իրականացվում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի և ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների պահանջների համաձայն՝ (i) Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (հոդված 21, կետ 2- 2)) 2. փորձաքննության դրական եզրակացության ժամկետը համարվում է ավարտված, եթե. 2) նախագծում և նախնական փաստաթղթերում առանց լիազորված մարմնին տեղեկացնելու կատարվել են փոփոխություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, (ii) ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների պահանջներ՝ 25. Համալիր խնդիրներ. (iii) ապահովելով անվտանգության պլանների արդիականացումը՝ հիմք ընդունելով մանրամասն ինժեներական նախագիծը և գործողությունների շրջանակի փոփոխությունները: Թարմացված ՆԲՓ/ՇՄԱԳ-ը ներկայացվել է ՀՀ ԲՆ և ԱԶԲ հաստատմանը: Դրական կարծիքները (տես Հավելված 1) և հաստատումները ստացվել են համապատասխանաբար 06.08.2021 և 26.08.2021 թ-ին: ՆԲՓ և ՇՄԱԳ փաստաթղթերը տեղադրվել են ՃԴ-ի և ՀՀ ԲՆ կայքերում: Հաշվետու ժամանակահատվածում, հիմք ընդունելով նախագծային փոփոխությունները և ԱԶԲ և ՀՀ իրավական պահանջները, մշակվել է ՏԱ՝ թարմացնելու ՀՀՃՄՆԾ Տրանշ 2 Ծրագրի կմ37+545 – կմ71+500 ճանապարհահատվածի Նախնական բնապահպանական փորձաքննությունը (ՆԲՓ՝ ԱԶԲ պահանջ) և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ՝ ՀՀ պահանջ): Թարմացված ՆԲՓ/ՇՄԱԳ-ը ներկայացվելու է ԱԶԲ դիտարկմանը և/կամ հաստատմանը:

### 1.3 Ծրագրի նկարագրությունը

ՀՀ-ը ընտրել է Բավրա-Երևան-Ազարակ երթուղին որպես հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մաս, որը պետք է վերականգնվի, վերակառուցվի և լայնացվի: «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը» իրականացվում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (ՏԿՏՏՆ) «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի կողմից (այսուհետ՝ ՃԴ), որը նշանակվել է որպես աշխատանքների համակարգող: Ծրագիրը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից Բազմափուլ ֆինանսավորման գործիքի շրջանակներում (ԲՖԳ):

ԲՖԳ-ը նախատեսված է հյուսիսից հարավ ձգվող ազգային ճանապարհների վերականգնման և արդիականացման համար՝ նոր ընդլայնված Հյուսիս-Հարավ մայրուղու վերածման նպատակով: Հիմնական նպատակն է՝ ընդլայնել առկա երկուղի ճանապարհները՝ վերածելով քառուղի ճանապարհների հնարավորության դեպքում գոյություն ունեցող ծրագծերի երկայնքով կամ կառուցելով նոր այլընտրանքային երկուղի ճանապարհներ այն հատվածներում, որտեղ մեկ քառուղի ճանապարհը հնարավոր չի լինի կառուցել:

Տրանշ 1-ի նպատակն է բարելավել Հյուսիս-հարավ միջանցքի երկու ճանապարհային հատվածներ, մասնավորապես՝ Երևանից Աշտարակ M-1 ճանապարհը կմ 18+370-ից մինչև կմ 29+773 (Հատված 3՝ Կապալառուի պայմանագրով) և Երևանից Արարատ M-2 ճանապարհի կմ 9+312-ից մինչև կմ 47+400 (Հատված 2՝ Կապալառուի պայմանագրով):

Տրանշ 2-ը սկսվում է Աշտարակում կմ29+600 և ավարտվում՝ Թալինի մոտ կմ 71+500 (Հատված 1՝ Կապալառուի պայմանագրով): Ուշանում կառուցվելու են երկու շրջանցիկ ճանապարհներ՝ սկսած կմ36+600-ից մինչև կմ40+300: Ծրագիրը նաև ունենալու է նոր ճանապարհային ծրագիծ (8.95 կմ) Կաթնաղբյուրում՝ սկսած կմ 59+950-ից մինչև կմ68+900, որը

գտնվելու է առկա մայրուղու ձախ կողմում և միանալու է առկա ծրագծին Թալինում: Բացի այդ, նախագծի փոփոխության արդյունքում Ծրագիրը ունենալու է նոր ճանապարհային ծրագիծ Ագարակ համայնքի մոտակայքում՝ սկսած կմ 29+600-ից մինչև կմ 37+600:



Պատկեր 1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 1 և Տրանշ 2

#### 1.4 Ծրագրի շրջանակներում կնքված Պայմանագրերը և դրանց կառավարումը

Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ԱԶԲ-ը կանոնավոր կերպով իրականացնում է դիտարկումներ և ստուգումներ՝ ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (SPS 2009) չափանիշներին և պահանջներին համապատասխան: ԱԶԲ-ը կաջակցի ՃԴ-ին սոցիալական և բնապահպանական ազդեցություններ ու ռիսկերը կառավարելու նպատակով, այդպիսով նպաստելով երկարաժամկետ ներդրումների կայունության խթանմանը: Կոնտակտային տվյալներ.

Հեռ.՝ +374-10-546371, +374-10-546372, +374-10-546373

Կայք՝ [www.adb.org/armenia](http://www.adb.org/armenia)

ՃԴ-ը կատարում է ծրագրի իրականացման կառավարում օրական կտրվածքով և ներառում է Սոցիալական և բնապահպանական անձնակազմ, որի պատասխանատվությունների թվում են ծրագրի բոլոր բնապահպանական հարցերի կառավարումը:

Կոնտակտային տվյալներ.  
Հեռ.: +374 10 511 391  
Էլ.հասցե՝ [info@armroad.am](mailto:info@armroad.am)  
Կայք՝ [www.armroad.am](http://www.armroad.am)

ԾԿԽ/Ինժեները իրականացնում է շինարարական վերահսկողության հետ կապված բոլոր գործողությունները և ներկայացնում նախագծի վերաբերյալ հաշվետվություններ:  
Խորհրդատուի շրջակա միջավայրի պաշտպանության ստորաբաժանումը պատասխանատու է շրջակա միջավայրի և հնագիտական ազդեցության, շինարարական աշխատանքների վերահսկման և, մասնավորապես, ԲԿՊ-ի կապալառուի կատարողականի վերահսկման և հաշվետվությունների համար:

Կոնտակտային տվյալներ.  
Էլ.հասցե՝ [Graham.WILLIAMS@egis-group.com](mailto:Graham.WILLIAMS@egis-group.com)

*Շրջակա միջավայրի պաշտպանության ստորաբաժանում՝*

Ներկայումս խորհրդատուի շրջակա միջավայրի պաշտպանության ստորաբաժանումը բաղկացած է.

- Վիկտոր Բախտամյան՝ բնապահպանության մասնագետ, պատասխանատու է շրջակա միջավայրի անվտանգության ապահովման ընդհանուր կառավարման համար:
- Ջուլիետա Հակոբյան՝ սոցիալական մասնագետ, պատասխանատու է սոցիալական երաշխիքների ընդհանուր կառավարման համար:

*ՃԴ Բնապահպանական և սոցիալական հարցերով բաժին*

Ծրագրի բնապահպանական ազդեցության կառավարման աշխատանքները ստանձնել են Բնապահպանական ազդեցությունների կառավարման ծառայությունը:

Արմեն Բողոյան - 2021 թվականի փետրվարին աշխատանքի է ընդունվել ՃԴ հիմնադրամում որպես շրջակա միջավայրի ազդեցության հարցերով կառավարման ծառայության ղեկավար և աշխատել մինչև 2022 թվականի սեպտեմբեր:

Ինեսա Զարգարյան - 2022թ. սեպտեմբերին, որպես շրջակա միջավայրի ազդեցության հարցերով մասնագետ, աշխատանքի է ընդունվել ՃԴ հիմնադրամում որպես շրջակա միջավայրի ազդեցության հարցերով մասնագետ, պատասխանատու է ծրագրի շրջակա միջավայրի կառավարման և ՀՀ բնապահպանական ազգային օրենսդրության համապատասխանության և ծրագրերի նախապատրաստման և իրականացման ընթացքում դոնորների ֆինանսավորման պաշտպանական քաղաքականության համար, ինչպես նաև նախագծում, շինարարություն և վերահսկողություն:

Լիլիթ Դիլանյան - սոցիալական ազդեցության կառավարման ծառայության ղեկավար

պատասխանատու է ծրագրի սոցիալական կառավարման և ՀՀ ազգային օրենսդրության համապատասխանության և ծրագրերի իրականացման ընթացքում դոնորների ֆինանսավորման ապահովման քաղաքականության համար, ներառյալ շինարարությունը և վերահսկողությունը:

#### **1.5 Ծրագրի աշխատանքները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում**

Հաշվետու ժամանակաշրջանում որևէ աշխատանք չի իրականացվել:

#### **1.6 Ծրագրի նախագծում ցանկացած փոփոխության նկարագրություն**

Առկա չէ հաշվետվության ենթակա որևէ աշխատանք:

#### **1.7 Շինարարական մեթոդների հետ համաձայնեցված ցանկացած փոփոխության նկարագրություն**

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համաձայնեցված շինարարական մեթոդների որևէ նշանակալի փոփոխություն չի կատարվել:

## **2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

### **2.1 Բնապահպանական անվտանգության աշխատանքների ընդհանուր նկարագրություն**

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը բանակցել և 2020թ. օգոստոսի 10-ին կնքել է պայմանագիր պրն. Վիկտոր Բախտամյանի հետ որպես ՆԲՓ/ՇՄԱԳ Խորհրդատու՝ Ծրագրի նոր նախագծի և ընթացիկ աշխատանքների համաձայն, Տրանշ 2-ի 8 կմ հատվածի (կմ29+600 – կմ37+600) համար Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման փաստաթղթի ուսումնասիրման և թարմացման ծառայությունները տրամադրելու նպատակով: ՆԲՓ/ՇՄԱԳ-ը թարմացնելու սույն պահանջը իրականացվում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի և ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների պահանջների համաձայն՝ (i) Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (հոդված 21, կետ 2- 2)) 2. փորձաքննության դրական եզրակացության ժամկետը համարվում է ավարտված, եթե. 2) նախագծում և նախնական փաստաթղթերում առանց լիազորված մարմնին տեղեկացնելու կատարվել են փոփոխություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, (ii) ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների պահանջներ՝ 25. Համալիր խնդիրներ. (iii) ապահովելով անվտանգության պլանների արդիականացումը՝ հիմք ընդունելով մանրամասն ինժեներական նախագիծը և գործողությունների շրջանակի փոփոխությունները: Թարմացված ՆԲՓ/ՇՄԱԳ-ը ներկայացվել է ՀՀ ԲՆ և ԱԶԲ հաստատմանը: Դրական կարծիքները (տես Հավելված 1) և հաստատումները ստացվել են համապատասխանաբար 06.08.2021 և 26.08.2021 թ-ին: ՆԲՓ և ՇՄԱԳ փաստաթղթերը տեղադրվել են ՃԴ-ի և ՀՀ ԲՆ կայքերում: Հաշվետու ժամանակահատվածում, հիմք ընդունելով նախագծային փոփոխությունները և ԱԶԲ և ՀՀ իրավական պահանջները, մշակվել է ՏԱ՝ թարմացնելու ՀՀՃՄՆԾ Տրանշ 2 Ծրագրի կմ37+545 – կմ71+500 ճանապարհահատվածի Նախնական բնապահպանական փորձաքննությունը (ՆԲՓ՝ ԱԶԲ պահանջ) և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ՝ ՀՀ պահանջ): Թարմացված ՆԲՓ/ՇՄԱԳ-ը ներկայացվել է ԱԶԲ և տեղադրվել է ԱԶԲ պաշտոնական կայքում:

Հաշվի առնելով, որ դրական եզրակացությունը անվավեր է ճանաչվել ՀՀ շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի համաձայն Տրանշ-2 8կմ ԿՄ 29+600.ԿՄ 37+600 շրջակա միջավայրի ազդեցության գնահատման փաստաթղթի վերանայման և թարմացման վերաբերյալ Ճանապարհային դեպարտամենտի և ՇՄՆ-ի միջև բանակցություններն ներկայումս ընթացքի մեջ են: ՇՄՆ -ից գրություն դեռ չի ստացվել: Բանակցությունների արդյունքները կներկայացվեն հաջորդ զեկույցում:

### **2.2 Շինարարական տեղամասի աուդիտ**

Կանոնավոր աուդիտներ չեն իրականացվել:

### **2.3 Խնդիրների լուծում (հիմնվելով Անհամապատասխանության ծանուցումների վրա)**

Հաշվետու ժամանակաշրջանում որևէ աշխատանք չի իրականացվել:



## **2.4 Միտումները**

Առկա չէ հաշվետվության ենթակա որևէ աշխատանք:

## **2.5 Շրջակա միջավայրի վրա չնախատեսված ազդեցությունները կամ ռիսկերը**

Հաշվետու ժամանակահատվածում որևէ չնախատեսված ազդեցություն կամ ռիսկեր շրջակա միջավայրի վրա չի գրանցվել:

### **3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

#### **3.1 Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մոնիթորինգի արդյունքները**

Հաշվետու ժամանակաշրջանում մոնիթորինգ չի իրականացվել:

#### **3.2 Շինարարական աղբի կառավարում**

Հաշվետու ժամանակահատվածում շինարարական աղբ չի գոյացել:

#### **3.3 Առողջություն և անվտանգություն**

##### **3.3.1 Համայնքի առողջության և անվտանգության ապահովումը**

2019թ. հունվար ամսից շինարարական աշխատանքների դադարեցման պատճառով ճանապարհային ոստիկանությունը ժամանակավորապես դադարեցրել է Տրանշ 2-ի ճանապարհահատվածում ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տրամադրումը: Այդ իսկ պատճառով, 2022թ. հունվար-հուլիս ամիսների տվյալները բացակայում են:

##### **3.3.2 Աշխատողի առողջությունն ու անվտանգությունը**

Հաշվետու ժամանակահատվածում որևէ դժբախտ պատահար տեղի չի ունեցել:

#### **3.4 Վերապատրաստման դասընթաց**

Դասընթացներ չեն կազմակերպվել:

---

## **4. ՏՇՄԿՊ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

### **4.1 ՏՇՄԿՊ-Ի ուսումնասիրություն**

Առկա չէ:

## **5. ԼԱՎ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **5.1 Լավ պրակտիկա**

Հաշվետու ժամանակահատվածում չի արձանագրվել որևէ նոր գործունեություն, որը Ծրագրի շրջանակներում կարող է որակվել որպես լավ պրակտիկա:

### **5.2 Բարելավման հնարավորություններ**

COVID-19 համաճարակային իրավիճակների վերաբերյալ ԱԶԲ կողմից ներկայացված ուղեցույցը շատ օգտակար կլինի մեր Կապալառուների համար՝ իրենց գործունեությունը կառավարելու և աշխատողների կարողությունները բարելավելու համար: Այդ ուղեցույցը ներառվել է կապալառուի մրցութային փաստաթղթերում (մրցույթը հայտարարվել է 2021թ. դեկտեմբերի 3-ին): Ընտրված Կապալառուս պետք է մշակի ՆԲՓ/ՇՄԱԳ-երը՝ հիմք ընդունելով ԱԶԲ COVID-19 համաճարակային իրավիճակների վերաբերյալ Առողջության և անվտանգության ուղեցույցը և COVID-19 Ներքին լավագույն փորձի վերաբերյալ խորհրդատվական փաստաթուղթը: Հաշվետու ժամանակահատվածում, հիմք ընդունելով նախագծային փոփոխությունները և ԱԶԲ և ՀՀ իրավական պահանջները, մշակվել է ՏԱ՝ թարմացնելու ՀՀՃՄՆԾ Տրանշ 2 Ծրագրի կմ37+545 – կմ71+500 ճանապարհահատվածի Նախնական բնապահպանական փորձաքննությունը (ՆԲՓ՝ ԱԶԲ պահանջ) և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ՝ ՀՀ պահանջ): Թարմացված ՆԲՓ/ՇՄԱԳ-ը ներկայացվել է ԱԶԲ և տեղադրվել է ԱԶԲ պաշտոնական կայքում:

## **6. Բողոքների լուծման մեխանիզմ**

### **6.1 Բողոքներ**

Հաշվետու ժամանակաշրջանում որևէ բնապահպանական բնույթի բողոք չի ներկայացվել:

---

## 7. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 7.1 Ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ չեն սկսվել:

### 7.2 Առաջարկություններ

Ընտրված Կապալառուն (նախատեսվում է, որ կապալառուի ընտրությունն կիրականացվի 2022 թվականի երրորդ եռամսյակի վերջին, մրցույթը հայտարարվել է 2021թ. դեկտեմբերի 3-ին) պետք է մշակի և իրականացնի ՏՇՄԿՊ-ը՝ ԱԶԲ-ի COVID-19, Առողջության և անվտանգության ուղեցույցի և ներքին օգտագործման համար մշակված COVID-19 վերաբերյալ լավ պրակտիկայի խորհրդատվական տեղեկանքը: